ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հայտարարությունը

Բահրեյնի Թագավորության ձերբակալված քաղաքացուն ազատ արձակելու և նրա հնարավոր արտահանձնումը կասեցնելու պահանջի վերաբերյալ

2016թ. հունվարի 2-ին ՀՀ Ոստիկանության կողմից տարածվել է հայտարարություն այն մասին, որ 2016թ. հունվարի 1-ին՝ ժամը 23:00-ին, Զվարթնոց օդանավակայանում հայտնաբերվել և բերման է ենթարկվել Բահրեյնի Թագավորության քաղաքացի Ֆադհել Ռ.-ը, ով 2014թ. մայիսի 25-ից Բահրեյնի Թագավորության կողմից միջազգային մակարդակով հետախուզվում է ԲՀ Քրեական օրենսգրքի 178 հոդվածի, 179 հոդվածի, 277/1 հոդվածի, 409/1 հոդվածի, 414/1 հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի ու 58 հոդվածի մեղադրանքով /սպանության փորձ, պայթուցիկ նյութերի ապօրինի շրջանառություն, հասարակական և մասնավոր սեփականության վնասում, զանգվածային անկարգություն և ահաբեկչություն/: Ֆադհել Ռ.-ը ձերբակալվել և տեղափոխվել է ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ: Փաստի մասին տեղեկացվել է ՀՀ Գլխավոր դատախազությունը, ինչպես նաև ՀՀ-ում Ինտերպոլի ներկայացուցչությունը՝ հետախուզումը նախաձեռնողին հայտնելու համար:

Միաժամանակ 2016թ. հունվարի 2-ին Բահրեյնի Թագավորության Հակակոռուպցիոն, տնտեսական և էլեկտրոնային անվտանգության գլխավոր տնօրենը հայտարարել է, որ Հայաստանի իշխանությունները ձերբակալել են հետախուզման մեջ գտնվող անձի, ով ահաբեկչական նպատակներով սեփականության վնասման և պայթուցիկ նյութերի օգտագործման համար Բահրեյնում դատապարտվել է 7 տարվա ազատազրկման: Հակակոռուպցիոն, տնտեսական և էլեկտրոնային անվտանգության գլխավոր տնօրենը Ինտերպոլին խնդրել էր ձերբակալել հետախուզվող անձին, ինչպես նաև հայտնել է, որ քայլեր են ձեռնարկվում կալանավորված անձին վերադարձնելու ուղղությամբ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը խիստ մտահոգված է Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից Ինտերպոլի միջոցով Բահրեյնի Թագավորության 25-ամյա քաղաքացու հնարավոր արտահանձման փաստով:

Անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ ՄԱԿ-ը, որի անդամ է հանդիսանում և՛ Հայաստանի Հանրապետությունը, և՛ Բահրեյնի Թագավորությունը, իր կառույցների մի շարք որոշումներով անդրադարձել է Բահրեյնի Թագավորությունում քաղաքացիների նկատմամբ խոշտանգումների տարածվածության վերաբերյալ:

Մասնավորապես, ՄԱԿ-ի Կամայական կալանավորման աշխատանքային խմբի 2014/1 որոշմամբ արձանագրվել է, որ Թագի ալ-Մայդանի կալանավորումը Բահրեյնի Թագավորության կողմից եղել է կամայական և նրա նկատմամբ կիրառվել են խոշտանգումներ՝ ցուցմունքներ կորզելու նպատակով: 2014/22

որոշմամբ Աշխատանքային խումբը արձանագրել է այն, որ կամայականորեն կալանավորված Ջասիմ ալ-Հուլաիբին բազմիցս ենթարկվել է դաժան վերաբերմունքի և խոշտանգումների:

Ընդհանուր թվով 2011թ. ՄԱԿ-ի Հատուկ ընթացակարգերով բարձրաձայնվել են թվով 75 մարդկանց նկատմամբ Բահրեյնի Թագավորության իշխանությունների կողմից խոշտանգումների, բռնությունների և դաժան վերաբերմունքի փաստերի մասին:

Էմնեսթի Ինթերնեյշնլ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը 2015թ. մարտին հայտարարել է Բահրեյնի Թագավորության անվտանգության ուժերի կողմից ահաբեկչության հետ կապված մեղադրանքներով խոստովանություն կորզելու նպատակով մարդու իրավունքների պաշտպան Հուսեին Ջավադին խոշտանգումների ենթարկելու մասին:

Հյուման Ռայթս Ուոթչ իրավապաշտպան կազմակերպությունը 2015թ. նոյեմբերին հրապարակած զեկույցում նշել է Բահրեյնի կալանավորման համակարգում գրանցված խոշտանգման 14 անհատական դեպքերի մասին:

Ամերիկացիները հանուն Բահրեյնում ժողովրդավարության և մարդու իրավունքների կազմակերպության կողմից 2013թ. հոկտեմբերից սկսած փաստագրվել է 150 անհատական դեպքերի մասին, որոնցում քաղաքացիները հայտնել են ամենատարբեր բռնությունների և խոշտանգումների մասին՝ ծեծ, մտրակահարում, ջրահեղձում, քնից, խմիչքից և ուտելիքից զրկում, սեքսուալ ոտնձգություն, բժշկական օգնության չտրամադրում, էլեկտրահարում և այլն:

Այսպիսով՝ ՀՀ կողմից ձերբակալված՝ Բահրեյնի Թագավորության քաղաքացու արտահանձնումը կարող է հանգեցնել նրա նկատմամբ խոշտանգումների, դաժան, մարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի Բահրեյնի իշխանությունների կողմից, որի համար անմիջական պատասխանատվություն կկրեն ՀՀ իշխանությունները: Հայաստանի Հանրապետությունը, որպես Եվրոպայի խորհրդի անդամ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվեցիան վավերացրած պետություն, պարտավոր է անհապաղ ազատ արձակել Բահրեյնի Թագավորության քաղաքացուն և կասեցնել նրա արտահանձման գործընթացը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 1-ին հոդվածի 1-ին մասին ընթացակարգերի պահպանմամբ: Միաժամանակ Հանձման մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին և երկրորդ կետերը, 11-րդ հոդվածը արգելում են քաղաքացու հանձնումը իր պետությանը, եթե նրա նկատմամբ քրեական հետապնդումը իրականացվում է քաղաքական գործունեության համար կամ նրա նկատմամբ կարող է կիրառվել մահապատիժ: Ի դեպ՝ Բահրեյնի Թագավորությունում մահապատիժը վերացված չէ:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը TARAKHEL-ը՝ ընդդեմ Շվեյցարիայի (Գանգատ թիվ 29217/12) որոշման 93-րդ կետում արձանագրում է. «Դատարանը կրկնում է, որ նախադեպային իր զարգացած իրավունքի համաձայն՝

պայմանավորվող պետության կողմից ապաստան հայցողին արտաքսելը կարող է հանգեցնել 3-րդ հոդվածի խախտման և հետևաբար Կոնվենցիայի համաձայն հարց կառաջացնի տվյալ պետության պատասխանատվության հետ կապված, եթե լուրջ հիմքեր ներկայացվեն ապացուցելու համար, որ շահագրգիռ անձը կարող է խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկվելու վտանգի առաջ կանգնել ընդունող երկրում: Նման հանգամանքներում, 3-րդ հոդվածը ենթադրում է մի պարտավորություն, ըստ որի՝ անձը չի կարող արտաքսվել այդ երկիր»:

Գտնում ենք, որ Ֆադիել Ռ.-ը կարող էր ձերբակալվել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ ըստ Հանձման մասին Եվրոպական կոնվենցիայի 16-րդ հոդվածի:

Այսպիսով, ելնելով Բահրեյնի Թագավորությունում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ ՄԱԿ-ի կառույցների և այլ միջազգային կազմակերպությունների կողմից արձանագրված բազմաթիվ մտահոգություններից և ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների տրամաբանությունից, պահանջում ենք անհապաղ ազատ արձակել Բահրեյնի Թագավորության քաղաքացի Ֆադիել Ռ.-ին և կասեցնել նրա արտահանձնումը Բահրեյնի Թագավորությանը:

Վանաձոր, 5 հունվարի 2016թ.